



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«31» հունվարի 2013 թ.

N 16 - ՆԿ/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30\_Ի ԹԻՎ 98-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ  
ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <դ> ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 716-Ն որոշման 2-րդ կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի հուլիսի 30-ի թիվ 98-Ա/1 հրամանը և հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն> պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ մանկատուն/ կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:
2. Մանկատան տնօրենին՝ հնգօրյա ժամկետում կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնելու պահանջն արժանացնելու գրանցման:
3. Սույն հրամանի հսկողությունը վերապահելու պահանջն արժանացնելու աշխատակազմի ղեկավարին:



**Ա. Ասատրյան**

Տպագրված է ընդամենը 5 օրինակ  
ՕՐԻՆԱԿ -----

<ԳՐԱՆՑՎԱԾ Է>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

ԲԱԺԻ ԿՈՂՄԻՑ 13.05.2003թ

գրանցման թիվ 282.210.04703

վկայական 03Ա060285

<07.09.2007թ գրանցված կանոնադրությունը>


Թիվ 00841035 փոփոխությունը

<ԳՐԱՆՑՎԱԾ Է> ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ


ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻ

ԿՈՂՄԻՑ 07.09.2013թ.

←  S/Ք.Արմոն' →

<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

2013թ  
թիվ  իրանմանով

Նախարար  Մանուկյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
<ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ> ՊԵՏԱԿԱՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <Մարի Իզմիրյանի անվան մանկատունը> այսուհետ՝ մանկատուն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, բժշկասոցիալական բնույթի մանկական խնամակալական պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Մանկատունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <Մարի Իզմիրյանի անվան մանկատուն> պետական հիմնարկի վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: /282.210.04703/

2. Մանկատան գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, իրավական այլ ակտերով, սույն կանոնադրությամբ:

3. Մանկատունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Մանկատան գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Մանկատունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Մանկատունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Մանկատունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ մանկատան պարտավորությունների, իսկ մանկատունն իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Մանկատունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև իր անվանմամբ ձևաթղթեր:

9. Մանկատունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Մանկատան գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան-37, Մկրտիչ Յաղոբյանի նրբանցք 13:

11. Մանկատան անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <Մարի Իզմիրյանի անվան մանկատուն> պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ ՀՀ ԱՍՀՆ ՄԻԱՄ ՊՈԱԿ

ռուսերեն՝ <Детский дом имени Мари Измирлян,, Министерства труда и социальныъ вопросов, государственная не коммерческая организация.

ռուսերեն կրճատ՝ ДДИМИМТИСВГНКО

անգլերեն՝ 'Children's home after Mary Izmirlyan'' State non Commercial Organization of the Ministry of Labour and Social Issues of Republic of Armenia

անգլերեն կրճատ՝ CHAMYSNCOMLSIRA:

## II. Մանկատան գործունեության նպատակը և առարկան

12. Մանկատան հիմնական նպատակը առանց ծնողական խնամքի մնացած կենտրոնական նյարդային համակարգի, օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական արատներ ունեցող հաշմանդամ երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումն է:

13. Մանկատան գործունեության առարկան 0-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած հաշմանդամ երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացումն է, նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջմունքների բավարարումը, խնամքի ու դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

14. Մանկատունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) կազմակերպում է երեխաների ընդունելությունը մանկատուն,
- 2) աջակցում է նրանց հարմարվելու նոր սոցիալական միջավայրին,
- 3) կազմակերպում է մանկատան սաների կենցաղային սպասարկումը, ապահովում է նրանց համապատասխան խմբասենյակներով, անկողնային պարագաներով, հագուստով, կոշիկեղենով,
- 4) ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով երեխայի տարիքից և առողջական վիճակից,
- 5) կազմակերպում է դիսպանսերիզացում, բուժում, մասնագետ բժիշկների օգնություն, շուրջօրյա բժշկական սպասարկում, անհրաժեշտության դեպքում հոսպիտալացում,
- 6) կազմակերպում է երեխաների ուսումը հանրակրթական դպրոցներում,
- 7) նախապատրաստում է որդեգրման կամ խնամակալության հանձնվող երեխաների փաստաթղթերը,
- 8) իրականացնում է երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների ծանոթացումը որդեգրման ենթակա երեխաների հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 9) կազմակերպում է երեխաների ամառային հանգիստը,
- 10) կազմակերպում է երեխաների մասնագիտացմանն ուղղված աշխատանքներ,
- 11) ապահովում է 18 տարին լրացած սաների՝ մասնագիտացված այլ հաստատություններ տեղավորումը,
- 12) ապահովում է մանկատանը սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային միջոցառումների իրականացումը,
- 13) կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված անձնակազմի որակավորման բարձրացմանը և աշխատանքների կատարելագործմանը,
- 14) պահպանում է մանկատան սաների սեփականություն հանդիսացող գույքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Մանկատան շենքը համապատասխանում է սանիտարա-հիգիենիկ, հակահրդեհային և անվտանգության տեխնիկայի պահանջներին և ունի հաշմանդամ երեխաների կյանքի և կենցաղի համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ:

16. Մանկատունը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

### III. Մանկատան ձեռնարկատիրական գործունեությունը

17. Մանկատունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում,

2) հաշմանդամ երեխաների խնամքի ու դաստիարակության վճարովի ծառայությունների մատուցում:

18. Մանկատան գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

19. Մանկատունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

### IV. Մանկատան կառավարումը

20. Մանկատան կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

21. Լիազորված պետական մարմինը՝

1) ապահովում է մանկատան բնականոն գործունեությունը,

2) հաստատում է մանկատան եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մանկատան տնօրենի ներկայացմամբ հաստատում է մանկատան հաստիքացուցակը և աշխատողների թիվը, ինչպես նաև համաձայնություն է տալիս մանկատան տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածուների վերաբերյալ,

4) իրականացնում է մանկատան գործունեության նկատմամբ վերահսկողություն,

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մանկատան տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

6) լսում է մանկատան գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում մանկատան տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

7) վերահսկողություն է իրականացնում մանկատան ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,

8) վերահսկողություն է իրականացնում մանկատան սեփականության պահպանության նկատմամբ,

9) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

22. Մանկատան ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

23. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորած պետական մարմնի ղեկավարը:

Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորած պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր պայմաններ, ինչպես նաև այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

24. Տնօրենը կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

25. Մանկատան տնօրենը մանկատան անունից օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մանկատանը տեղավորված երեխաների խնամակալի իրավունքները և պարտականությունները:

26. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

27. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մանկատան և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

28. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս մանկատան անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մանկատան գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3) տալիս է մանկատան անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում մանկատան աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

- 5) նախքան պաշտոնի նշանակելը՝ լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնում է մանկատան տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածությունները,
  - 6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
  - 7) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում մանկատան հաստիքացուցակը, աշխատողների թվաքանակը, ներքին կարգապահական կանոնները,
  - 8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
  - 9) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում մանկատան եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
  - 10) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,
  - 11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ
  - 12) հաստատում է բժշկամանկավարժական խորհրդի կանոնադրությունը և անհատական կազմը:
29. Տնօրենի բացակայության ժամանակ, տնօրենի լիազորություններն իրականացնում է պետական լիազորված մարմնի գրավոր որոշման համաձայն նշանակված այլ անձ:

## V. Մանկատան խորհուրդը

30. Երեխաների խնամքի, բժշկասոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով ստեղծվում է մանկատան բժշկա-մանկավարժական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):
31. Խորհուրդը պետք է բաղկացած լինի առնվազն 11 անդամից:
32. Խորհրդի նախագահը մանկատան տնօրենն է:
33. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել մանկատան տնօրենի տեղակալը, բժիշկը, մանկավարժը, հոգեբանը, սոցիալական աշխատողը, իրավաբանը և մանկատան այլ մասնագետներ՝ Խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով:
34. Խորհուրդի գործունեության կարգը սահմանվում է խորհրդի կանոնադրությամբ:
35. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստերն արձանագրվում են և ըստ անհրաժեշտության առաջարկությունների հետ համատեղ ներկայացվում է լիազոր մարմնին:
36. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝
  - 1) որոշում է երեխաների մտավոր հետամնացության աստիճանը,
  - 2) քննարկում և հաստատում է բժշկասոցիալական, ուսումնադաստիարակչական, կազմակերպչական խնդիրները և ընդունում որոշումներ,
  - 3) քննարկում է երեխաների դաստիարակչական և այլ աշխատանքների կազմակերպման հարցերը,

4) 18 տարին լրացած սաների՝ այլ մասնագիտացված հաստատություններ տեղափոխելու ու մասնագիտական կողմնորոշման հարցերը:

37. Մանկատան աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրերով, մանկատան ընդհանուր և առանձին ստորաբաժանումների ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

## VI. Մանկատան սեփականությունը

38. Մանկատան սեփականությունը ձևավորվում է դրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով մանկատանը հանձնվող, ինչպես նաև մանկատան գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

Մանկատան գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները:

39. Մանկատունն իրավունք ունի օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

40. Մանկատան սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի գույքային իրավունքներ, բացառությամբ մանկատան լուծարումից հետո մնացած գույքի:

41. Մանկատան սեփականության պահպանման հոգսը կրում է մանկատունը:

42. Մանկատան սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

## VII. Մանկատանն ամրացված գույքը

43. Հիմնադրի որոշումով մանկատան անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

44. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից մանկատան ամրացված գույքը:

45. Մանկատունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

46. Հիմնադրի կողմից մանկատան ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ մանկատան օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:



### **VIII. Մանկատան կարիքների համար գնումների կազմակերպումն ու իրականացումը**

47. Մանկատունն իր կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կատարում է <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

### **IX. Վերահսկողությունը մանկատան գործունեության նկատմամբ**

48. Մանկատան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման /աուդիտի/ լիազորված պետական մարմնի ներքին աուդիտի բաժնի կողմից:

### **X. Մանկատան վերակազմակերպումը և լուծարումը**

49. Մանկատունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

50. Մանկատունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

51. Մանկատան լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

52. Մանկատունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

53. Մանկատունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

54. Մանկատան լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: